Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հունիսի 6-ի N 336 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՕԴՈՐԱԿԻՉՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Իրականացնել Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Մեխակավանի զինվորական հոսպիտալի համար օդորակիչների գնում, տեղափոխում և տեղադրում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26, ՀՎՀՀ՝ 02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Արցախի Հանրապետություն, Հադրութի շրջան, Մեխակավանի զինվորական հոսպիտալ, բնագավառը՝ առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 1,325,170 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Մեխակավանի զինվորական հոսպիտալ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019 թվականի մայիսի 10-ից մինչև հունիսի 28-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և	Լիազոր մարմնի կողմից ծրագիրը բարեգործական որակելուց հետո նախատեսվում է

	ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«ՓՐԻԹԻ ՈՒԵՅ» ՍՊԸ-ից գնել 6 հատ օդորակիչ, տեղափոխել և տեղադրել Մեխակավանի զինվորական հոսպիտալում: Արժեքը՝ 1,325,170 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՓՐԻԹԻ ՈՒԵՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի արժեքը կազմում է 1,325,170 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ